

ՆԵՐՊՈՅԱԿԱՆ ՀՈՂՈՎԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Յ. ՇԱՀԱԶՅԱՆ

Լեզվաբանական գրականության մեջ հին հայերենի ներգոյական հոլովի առանձնացման վերաբերյալ եղել են տարակարծություններ. դրանք պայմանավորված են եղել բուն լեզվական փաստերով, նրանով, որ ներգոյական հոլովը ձևաբանորեն հստակ տարբերակված չի եղել:

Հայտնի է¹, որ գրաբարում ներգոյական հոլովն ուներ արտահայտության հետևյալ ձևը.

ա) ա, ի-ա ներքին, ե, ու, ի, նաև ի-ա արտաքին հոլովների դեպքում ներգոյականը կազմվում էր եզակի սեռական-տրականից՝ ի (յ) նախդրով, (այծ-յայծի, զգեստ-ի զգեստու, արիւն-յարեան, անձին-յանձին, ոսկր-յոսկեր, աստղ-յաստեղ): Բերենը համապատասխան բնագրային օրինակներ² վերոհիշյալ կազմությունների վերաբերյալ.

... գերեին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին (ՓԲ, ԶՊ, 254): Գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա (ՓԲ, ԶՊ, 292): Եւ ի մովսիսական պատմութեան հայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն (Կ, ՎՄ, 72): ... որ ի նմանէ հալածանացն թագուցեալ էր ի Սերապտիոն լերին (ՄԽ, ԶՊ, 276): ... անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցնելոց վախճանի երանելոյն Սահակայ (Կ, ՎՄ, 140): Բազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին (ՄԽ, ԶՊ, 46): Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ և կնքեալ քրիստոսական կնքովն (Կ, ՎՄ, 136): ... և քոյով հրամանաւ վարին ամենայն զօրութիւնք երևելիք և աներևոյք, որ են յերկինս և յերկրի, ի ծովու և ի ցամաքի (ԱԳ, ԶՊ, 100):... և սակաւ ինչ կացեալ ժամանակս՝ վախճանէր յաշխարհիս Հայոց (ՂՓ, ՊԶ, 60):

բ) ա, ո (նաև ո-ա խառը) հոլովումների և ամբողջ հոգնակի հոլովման դեպքում ներգոյականը կազմվում է հայցականից՝ ի նախդրով (գործ-ի գործ, ջուր-ի ջուր, ձկուկ-ի ձկուկ, սիրտք-ի սիրտս և այլն): Ներգոյականի կազմության օրինաչափությունը ներկայացնենք բնագրային օրինակներով. Սոքա յօղս վերինս բնակեալ են (ԱԳ, ԶՊ, 146):... և տրտմութեամբ մեծաւ ննջեալ՝ երևութացաւ նմա ի քուն խաչ աստեղեաց յերկնից (ՄԽ, ԶՊ, 274): Եւ ժողովեալ սուրբ հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն (ՄԽ, ԶՊ, 360): ... որ պատմի ի Գողթան (ՄԽ, ԶՊ, 209): Արդ՝ գտեալ լինէին նոքա ի հնձանս շինուածոցն (ԱԳ, ԶՊ, էջ 96): ... զքաջութիւն իւրաքանչիւր արծանացուցին ի վեպս և ի պատմութիւնս (ՄԽ, ԶՊ, 11): Ահա առեալ հեծանոց ի ձեռն Փրկիչն ամենեցուն Քրիստոս՝ սրբել զկալ իւր և ընտրել զգործնհատն, ժողվել յերկնից ի շտեմարանն (ՂՓ, ԶՊ, 156): Որք ի լերինս և յանապատս և ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն զծառայութիւն հարկանէին (Կ, ՎՄ, 108):

Նույն կերպ են կազմվում ամկանոն հոլովման գոյականների ներգոյականը. եզակի ներգոյականը կազմվում է եզակի տրականից (այր-յառն, տեր-ի տեառն, ար-յաւուր, հայր-ի հաւր, մայր-ի մաւր, եղբայր-յեղբաւր, քոյր-ի քեռ, կին-ի կնոջ, տիկին-ի տիկնոջ, գիւղ-ի

¹ Տե՛ս Ա. Արքայանյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976: Հ. Ավետիսյան, Ռ. Դազարյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1986:

² Գրաբարի ներգոյական հոլովի վերաբերյալ բերված բոլոր օրինակները վերցված են 5-րդ դարի պատմիչներից. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983: Առքյան, Վարդ Մաշտոցի, Երևան, 1981: Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987: Դազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:

գեղջ), իսկ հոգնակի ներգոյականը՝ հոգնակի հայցականից (յարս, ի տեարս, յաւուրս, ի հարս, ի մորս, յեղբարս, ի քորս, ի կանայս, ի տիկնայս, ի գիւղս):

Յին հայերենի ներգոյականի իմաստի արտահայտման նշված օրինաչափություններից կան որոշակի շեղումներ: Ի հոլովման պատկանող որոշ տեղանունների եզակի ներգոյականը կազմվել է եզակի հայցականից. ինչպես՝ Բաբելոն-ի Բաբելոն, Եգիպտոս-յեգիպտոս. այդպես են կազմվել նաև որոշ հասարակ անունների ներգոյականները (որովայն-յորովայն): Ըստ Յր. Աճառյանի՝ այս գոյականները ներգոյականում չեն ստանում սեռական-տրականի ի հոլովիչը³, թեև պետք է ավելացնենք, որ հին մատենագրության մեջ ի-ով ձևեր նույնպես հանդիպում են. եւ զոմանց բնական զիմաստութիւն զովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն **յեգիպտոս**, և զԴանիէլին ի **Բաբելոն** (Կ, ՎՄ, 74): ... և տուեալ զամենայն զանծս իւր **յեգիպտոս**՝ զնեաց ցորեան բազում յոյժ (ՄԽ, ԳՊ, 188): Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի **Բաբելոնի** (ՄԽ, ԳՊ, 46): ... յետ ծնանելոյ գորդի իւր զԱրամանեակ ի **Բաբելոնի**՝ չու արարեալ զնայ յերկիրն Արարադայ (ՄԽ, ԳՊ, 40):

Շեղում է նկատվում նաև ո հոլովման պատկանող բառերի ներգոյականների կազմության ժամանակ: Ի նախդրին են հարադրվում ի վերջավորությամբ ձևեր՝ տարբեր սեռական-տրականի ի կազմիչից: Յր. Աճառյանը բերում է այդ բառերի ցանկը⁴: Նշենք դրանցից մի քանիսը՝ զիշեր-զիշերոյ-ի զիշերի, բերան-բերանոյ-ի, բերանի, փոր-փորոյ-ի փորի և այլն: Այս փաստը Ա. Աբրահամյանը բացատրում է նրանով, որ այդ բառերը եզակիում զուգահեռաբար հոլովվում են նաև ի հոլովիչով⁵:

Գ. Ջահուկյանը, հիմք ընդունելով Ա. Մեյի կարծիքը, պնդում է, որ այդ ի-ն սեռական-տրականի ի-ից տարբեր մասնիկ է: Ահա թե ինչ է գրում նա. «Պետք է ենթադրել, որ հին հայերենի ո-ով և ա-ով հիմքերի ի վերջավորությունը ներկայացնում է հնդեվրոպական աթեմատիկ հիմքերից i-ն (մանավանդ շեշտված դիրքերում), որը բաղաձայնահանգ հիմքերից տարածվել է հիշյալ հիմքերի վրա: Այդ կարծիքը հաստատվում է խեթական տրական-ներգոյական i-ի առկայությամբ»⁶:

Ո հոլովման պատկանող մի շարք բառերի տրականն ունի **ու** հոլովակազմիչը՝ տարբեր սեռականից, հետևաբար այդ բառերի ներգոյականի իմաստն արտահայտվում է ի նախդրով և **ու** տրականով: Իրենց ներգոյականի իմաստն այսպես են արտահայտում հատկապես ին-ով վերջացող բառերը, **եալ** անցյալ դերբայը, **ստացական** դերանունները, **դասական թվականները** և մի շարք այլ բառեր, օրինակներ՝ վերին-ի վերնում, վերջին-ի վերջում, ասացեալ-յասացելում, մեր-ի մերում, ձեր-ի ձերում, մի-ի միում, չորրորդ-ի չորրորդում և այլն:

Փաստորեն **ու**-ը տրականի հոլովակազմիչն է, որից առաջ **ո**- բնի ձայնավորը դարձել է ու (միոյ-միում, հնոյ-հնում, աջոյ-աջում):

Ո-ա հոլովման պատկանող բառերի որոշ մասը տրականում ստանում է **ջ** հոլովակազմիչը, հետևաբար ներգոյականը դրսևորվում է ի նախդրով և **ոջ** վերջավորությամբ տրականով (զինի-ի զինուջ, տեղի-ի տեղուջ, կղզի-ի կղզուջ, այգի-յայգուջ և այլն):

Ըստ Ա. Մեյի, Յր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի՝ այս ջ-ն նախ հատուկ է եղել հենց ներգոյականին և հետո է միայն տարածվել տրականի վրա: Գ. Ջահուկյանը հաստատում է, որ սկզբնական շրջանում ջ-ով ձևը հին մակբայական ձև է եղել, որը գործածվել է նաև հունարենում⁷: **Ջ**-մասնիկը նշված բառաձևերում, ինչպես նաև **կնոջ** բառաձևում հանդես է եկել **ոջ** ձևով (բնի ձայնավորի հետ), իսկ որոշ դեպքերում՝ անբուն ձևով՝ ուղղակի **ջ** (գեղջ):

Ահա բնագրային մի շարք օրինակներ. Բայց զղիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ, Դայկ տանել ի Դարք և թաղել ի բարձրաւանդակ **տեղուջ** (ՄԽ, ԳՊ, 46): Արդ՝ հասեալ տիրանայ ի գաւառն Շոփաց՝ յիւրում արքայական **եկեղեցուջն** կամեցաւ կանգնել զպատկերն (Մտ, 326): ... և քան զաւուրս ինչ առաջ ոչ բազումս, առեալ բանք **յեկեղեցուջ** յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից՝ ասացեալ է ուրումն ցարքայ (ՂՓ, ԳՊ, 321): Եւ որ-

³ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 40:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 405:

⁵ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 39:

⁶ Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 87:

⁷ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 87:

պէս շատ խուզի և բազում քննութեամբ հարցեալ և ուսաք զնահատակելոցն թիւս, որք ի տեղոջ պատերազմին զոհվեցին (Մտ, 170): Եւ զօրավարն Գայոց Վահան Մամիկոնեանն դարձեալ ի կոտորածէ թշնամեացն՝ երթեալ հանգչէր զմնացեալ մասն ի գիշերոյն յՌիկ գեղջն (Մտ, 366):

Վերջապէս ներգոյական հոլովը ժամանակի իմաստ ունեցող որոշ բառերի դեպքում վերջանում է եամ-ով, որը տարբեր է սեռական-տրականի ձևից՝ **ամսոյ**, ներգոյականը՝ **յամսեան**: Ահա սա հիմք է տվել լեզվաբաններին, որ այդ ձևը հոլով համարեն: Դրան կանոնադառնանք ստորև:

V-VIII դարերում, երբ հին հայերենը իր ներքին զարգացման ընթացքով էր ընթանում, առանձին գիտական խմբի կողմից ստեղծվում է լեզվական մի նոր դպրոց, որը հետագայում կոչվեց **հունաբան հայերեն**: Մեզ հետաքրքրող հարցի՝ ներգոյական հոլովի վերաբերյալ նրանք բերած նորամուծությունների մասին Զր. Աճառյանի «Գայոց լեզվի պատմություն» աշխատության 2-րդ մասում կարդում ենք. «Զոլովման մեջ իբրև նորամուծություն կարող ենք հիշել սեռականի **ոջ**, **ոյր**, տրականի **ում**, ներգոյականի և բացառականի համար **ըն**, և մասնիկները (առաջինը բաղաձայնով սկսվող բառերի, երկրորդը ծայրավորով սկսվող բառերի համար)⁸:

Ահա բնագրային օրինակներ⁹. «... հարկ է և ներկոցունցբանս վարիլ երկոքունքք» (Նե-րած., Պորփիրի, էջ 230): «Արդ են ներ ծայնոջքն ներ անծիցն ուխտիցն մշանակք, և գրի-ցեալքն: ներ ծայնոջացն: ... արդ յաղագս այսոցիկ ասացեալ է ներ հագագս ոգւոյն՝ քանզի այլոց իրի է» (Պերիարմ. 461): «... որկէն ենթակայից և կան, նենթակայոջաց ասիցելոցն է (Ա-րիստ. յգ. մեկն, 463):

Հունաբան քերականների բերած բառակազմական և հատկապես քերականական նորամուծությունները, լինելով ժողովրդի լայն խավերի, ինչպես նաև գիտական շրջանի համար օտար, անհասկանալի, դուրս են ընկնում լեզվից և 9-րդ դարից իսպառ վերանում: Այդպես էլ վերանում են ներգոյականի կազմության անհարազատ ձևերը:

Սակայն 17-րդ դարում Զոռնի դպրոցում կրթված հայ կաթողիկ վարդապետները ստեղծում են մի նոր արհեստական լեզու՝ **լատինաբան հայերեն**, որը տարածվում է ողջ հայության շրջանում: Լատինաբան հայերենի խոշոր տեսաբաններն էին Զովհաննես Զոլով և Բարսեղ Զոլով՝ Կոստանդնուպոլսեցիները: Զովհաննես Զոլովի «Չտուքին հայկաբանութեան» (Զոռն, 1674) քերականության մեջ արտացոլված են լատինաբանների բոլոր նորամուծությունները: Մենք կանոնադառնանք դրանցից միայն ներգոյական հոլովի կազմությամբ: Ներգոյական հոլովի սովորական ձևերին զուգընթաց լատինաբան քերականները ընդունում են նաև ըն մախամասնիկի գործածությունը և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում, որը ծայրավորով սկսվող բառերից առաջ դառնում է ն և կցվում բառին; իսկ վերջինս էլ լատինների մասնությամբ ունենում է **տրականի** կամ հին հայերենի **ներգոյականի** վերջավորությունները: Այսպիսի կազմությունը հատուկ է ոչ միայն գոյականին (եզակի՝ ըն բանում, ըն գեղջ, ըն տեառն, նարեան, նաղբեր, նվդամում, նեսայոջ, մաստեղ. հոգնակի՝ ըն բանս, նոսկիս, ըն միտս), այլև ածականին, դերբային և դերանվանը (եզակի ոմն-նունեմն. նունեք, միմիք. հոգնակի՝ նոմանս, ո՞ր-նորո՞ւմ, ո՞-նում, հոգնակի՝ նո՞րս, նո՞յս, ըն լինելն, ըն սիրելն. միւրեան-միվրեանս, նայսմիկ, նայսոսիկ, մինքեան, միմում, միմս և այլն)¹⁰:

Լատինաբան հայերենն էլ՝ իբրև անհարազատ լեզու, դատապարտված էր մահվան:

Որոշ քերականներ, հիմք ընդունելով հին հայերենի ներգոյականի իմաստի դրսևորման յուրահատկությունը, այն համարեցին առանձին հոլով, իսկ ոմանք էլ այն ժխտեցին՝ որպես ձևաբանական կարգ: Լատինաբան քերականները (Կղեմես Գալանոս, Զովհաննես Զոլով, Էրզրումեցի, Ոսկան Երևանցի) ճանաչեցին ներգոյական հոլովը հետևյալ անվանումներով՝ **կնցողական**, **կայական**, իսկ Գ. Ավետիքյանը 1815 թ. հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գրքում առհասարակ մերժեց ներգոյական հոլովը:

Ներգոյականի առանձին հոլով համարելու օգտին է խոսում ֆրանսիացի հայտնի լեզվաբան Անտուան Մեյե¹¹: Նա գտնում է, որ բացի կոչականից, հնդեվրոպական մյուս հոլով

⁸ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. II մաս, Երևան, 1951, էջ 148:

⁹ Բնագրային օրինակները քաղված են Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի 2-րդ մասից, էջ 161:

¹⁰ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 314:

ները հայերենում առանձնաճանձնում են, քանի որ իրարից տարբեր են: Մեյեի կարծիքով՝ ներգոյականը առանձին հոլով է, թեև նման է տրակամին և հայցակամին, բայց որովհետև այն որոշ դեպքերում ունի իր հատուկ ձևը, ուստի առանձին հոլով է: Լեզվաբանը նկատի ունի ներգոյակամի ոչ-ով կազմությունը և հատկապես **յամսեան** բառաձևը, որը տրակամի **ամսոյ** ձևի նկատմամբ տարբեր է: Եվ վերջապես, նկատի ունի նաև այն հանգամանքը, որ ներգոյականը միշտ միևնույն հոլովի հետ չի նույնանում, այլ նմանվում է երբեմն հայցակամին և երբեմն տրակամին, ուրեմն այն առանձին հոլով է: Մեյեն նույն կարծիքն է հայտնում նաև ներգոյակամ հոլովի մասին գրած իր մի հոդվածում¹²: Նա ընդգծում է, որ կան բառեր, որոնք ու հոլովման դիմաց ունեն **եան**, բայց սեռակամի **ոյ** և ներգոյակամի **եան** ձևերը «յատուկ կ'երևին «ամիս» բառին»: Այսինքն՝ **ամսեան** կարող է լինել սեռակամ, տրակամ, ներգոյակամ, իսկ **ամսոյ** ձևը կարող է լինել սեռակամ, տրակամ, բայց ոչ ներգոյակամ:

Ներգոյակամն առանձին հոլով է համարում նաև Դր. Աճառյանը: Նա գտնում է, որ ներգոյակամը «**թեկուզ զամազան Ոոր ձևերի տակ** (ընդգծումը մերն է՝ Ա. Շ.), շարունակում է իր գոյությունը հմից մինչև այսօր»¹³:

Դր. Աճառյանը ներգոյակամի ի-ով կազմությունը տարբեր է համարում նախորդվոր այլ ձևերից, որոնք իրավամբ հոլով չի համարում, իսկ ներգոյակամի ինքնուրույն գոյությունը բացատրում է մերթ այս, մերթ այն հոլովի հետ նույնանալով և իրեն հատուկ ի նախդիր ունենալով, ուստի նրա «անկախ գոյությունը» ըմբռնելի է համարում: Ներգոյակամ հոլովի օգտին է խոսում նաև Մ. Աբեղյանը: Նա գրում է. «Ներգոյակամի զգացումը թերևս մեռած չէ եղել և ոչ միայն ոչ վերջավորության, այլև ավելի ևս «ի փառսն իւրում», «յաթոռ յուրում» և նման կապակցությունների համար, որոնց մեջ գոյակամը դրվում է հայցակամ, իսկ ածականը՝ տրակամ, և միասին կազմում են մի խառնուրդ հոլով՝ ներգոյակամի նշանակությամբ»¹⁴:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ գրաբարի նախորդվոր կազմությունները՝ բացառականը և ներգոյակամը, նույնպես հոլովներ են¹⁵:

Լեզվաբանների հայտնած տարակարծիքներից անկախ լեզուն իր ներքին օրենքներով զարգանում է, կրում փոփոխություններ, որի հետևանքով 12-րդ դարից ձևավորվում է լեզվական մի նոր որակ՝ **միջին հայերենը**:

Միջին հայերենը չնչակվեց և չնորմավորվեց, այդ պատճառով էլ նրան բնորոշ էին քերականական զուգաձևությունները: Ներգոյակամի իմաստը նույնպես արտահայտվում էր քերականական տարբեր միջոցներով, տարբեր կառուցվածքներով: Միջնադարի մշակութային հուշարձանների լեզվական քննությունից պարզվում է, որ 1. ներգոյակամի իմաստի արտահայտման դասական եղանակը (և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում) պահպանվում է առաջին ենթաշրջանում անխառն ձևով, երկրորդ ենթաշրջանում՝ բազմաթիվ փոփոխություններով:

Միջին հայերենի խոշոր ներկայացուցչի՝ Ներսես Շնորհալու ստեղծագործություններում առկա է հիմնականում գրաբարյան կաղապարը: Ժամրային առանձնահատկությունները այս հարցում որևէ դեր չեն խաղում: Օրինակներ «Ողբ եղեսիոյ» պոեմից (ՆՇ, 1973): Քորք և եղբարք իմ սիրելիք, որք յընդհանուր կողմ աշխարհին (21): Քաղաք և գեղք առհասարակ, ազգ և ազինք, որ էք **յերկրի** (21): ... Ժողովեցէք **ի** մին **վայրի** (42): Նստին ի սուզ **ի տան** մթի (44): Տուներ և տաճարք զարմանաւոր շինեալ **ի գիրկս** իմ շքեղաւոր (49): Այն որ ղօղեալ և թաքուցեալ, ծածկեալ անէր զեննզ **ի սրտին**, և դարանեալ գայլն **ի մայրին**, ինձն թաք չէր **յանապատին**... (55): Իւրաքանաչիւր յիւրում **տեղին** ուր պատահեցան՝ անկանին (76): ... աստ **ի գիրկս** խողխողեցին... (87): Բնակիք **ի վայրս** դաշտաց (133):

Մի շարք փաստեր էլ ներկայացնենք «Տաղերից»¹⁶. Տող արեան քո, Տեր, Տողեալ **ի հոգիս** (225): Եւ խայտար ձայնն **յորովայնին** (278): Ի բերան ծերոյ ամլոյն օրհնութիւն տայր պտղոյ կուսին (228): Երկնաւոր թագաւորին զինու հաղթեալ **ի պատերազմին** (226): Քանզի **ի ծոց** իմ են սոքա (232): Եվ ամփոփեալ իբր **ի տկի**՝ քաղցրիկ ցօղէ յոր **տեղ** պիտի (242):

¹¹ Տե՛ս Ա. Մեյե, Դասական հայերենի համեմատական քերականութեան ուրուագիծ, Ժնև, 1988, էջ 45, 63, 64:

¹² Տե՛ս Ա. Մեյե, Հայրենի մէջ «յամսեան» ներգոյակամը, «Բանասեր», 1899, գ. 2-րդ, էջ 144:

¹³ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան, 1957, էջ 376:

¹⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 342:

¹⁵ Գ. Ջահուկյան, Ո՛վ աշխ., էջ 124:

¹⁶ «Հայ դասական քնարերգություն», հ. I, Երևան, 1986:

Ներսես Շնորհալու հաջորդները¹⁷ (Ֆրիկ, Յովհ. Երզնկացի, Կոստանդին Երզնկացի, Յովհ. Թվկուրանցի, Սկրտիչ Նաղաշ, Նահապետ Քուչակ, Գր. Աղթամարցի, Յովասափ Սեբաստացի) առանց բացառության հարազատ են մնացել ներգոյականի կազմության գրաբարյան կաղապարներին, թեև առկա են նաև շեղումներ:

Բերենք մի շարք բնագրային օրինակներ վերոհիշյալ տաղերգուներից. յաշխարհիս (Ֆ, 99), ի դրախտ (Ֆ, 100), ի փորիդ (Ֆ, 91), յերկրի (Ֆ, 101), ի տեղս (ՅԵ, 149), ի սիրտ և ի հոգի (ՅԵ, 160), ի խաւարի (ԿԵ, 86), յերագ (ԿԵ, 86), ի վիրապի (ԿԵ, 100), ի հողին (ՅԹ, 106), ի բերանդ (ՆՔ, 31), ի ծոց (ՆՔ, 30): Ի Խորասան, ի Յնդուստան, ի Ֆրանկիստան, ի Պարսկաստան, ոչ ի Շամաստան (ՄՆ, 214):

2. Միջին հայերենում նկատվում է ի նախդրի հավելյալ գործածություն, որի վերաբերյալ փաստեր է բերում Լ. Յովսեփյանը 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների լեզուն քննելիս¹⁸: Չայ միջնադարյան լրիկյան նույնպես արծազանքում է լեզվական այդ նոր իրողությանը: Քանի որ Ն. Շնորհալին ներգոյականի կաղապարները անխառն ձևով էր պահպանում, ուստի նրա տաղերում և պոեմներում այդպիսի փաստերի չհամդիպեցինք, մինչդեռ հաջորդ շրջանի տաղերգուների ստեղծագործություններում, թեև քիչ հաճախակա՞նությամբ, այնուամենայնիվ այդպիսի ձևեր արծանագրվեցին. ի յարգանդ (Ֆ, 80), ի յուսումն (ԿԵ, 66), ի յերկիր (ՄՆ, 184), ի յորդիս (ՄՆ, 212), ի յ... տեղիմ (ՄՆ, 219), ի յառվին (ՅԹ, 140), ի յերագիս (փոխ՝ ի յերագ, ՆԹ, 217), ի յասպարիսին (ԳԱ, 33), ի յանդաստան (ԳԱ, 99), ի յեկեղեցին (ԳԱ, 19) և այլն:

3. Միջին հայերենի ի+տրական կառույցի փոխարեն գործածվում է ի+հայցական: Նախորդ կետի տակ բերված օրինակներից մի երկուսը՝ ի յերկիր (փխ. ի յերկրի), ի յանդաստան (փխ. ի յանդաստանի), ինչպես նաև՝ ի շիրիմ (ՆՇ, 24), փխ. ի շիրիմի, ի տուն (ՆՇ, 24) փոխ. ի տան, ի օտար երկիր (ՄՆ, 184) փխ. ի յօտար երկրի, ի բուրաստան (Ք, 9) փոխ. ի բուրաստան, ի գիրկդ (ՅԹ, 175) փխ. ի գրկիդ, այդ են վկայում:

Վաղ միջնադարում պատահում են ի նախդրի անկման դեպքեր, որոնք բնականաբար ուշ միջնադարում ավելի հաճախակի էին դառնում: Այդպիսի փաստեր դարձյալ բերում է Լ. Յովսեփյանը. «Կրելով զնա անարատ ոգւոջն», «աւուր վերջուն», «Կացեք զգոյշ ձերուն գործի», «իշխանութեան բարեպաշտ պարոնիս Լիպարիտի» և այլն¹⁹:

Այնինչ միջնադարյան հայ տաղերգության մեջ մնան իրողություն սակավ է պատահում. մեկ-երկու օրինակի հանդիպեցինք Ն. Քուչակի, Մ. Նաղաշի, Յ. Սեբաստացու տաղերում.

Չասրաթ կայ իմ սրտիս, որ լինիմ առ քեզ (ՄՆ, 181), սեր աշխարհիս շահ մի չունի (ՅՄ, 210): Երթի՛, դատաստան կանգնի (ՆՔ, 8):

Միջնադարի գրական հուշարձաններից փաստեր են բերվում ներգոյականի թե՛ ում և թե՛ ոջ վերջավորությամբ կազմությունների, որոնք մասին տեղեկություններ են տալիս «Ավանարկներ միջին գրական հայերենի պատմության» (Երևան, 1975) ուսումնասիրությունը Լ. Յովսեփյանի վերոհիշյալ աշխատությունը²⁰, ահա դրանք՝ յամարանոջ, ի ամսոջ, ի այգւոջ, ի եկեղեցւոջ, ի կզգւոջ, ի տարւոջ, ի տեղւոջ: Փաստորեն ոջ վերջավորությամբ ներգոյականներ են կազմվում տեղ և ժամանակ ցույց տվող բառերը: Ողջ միջնադարյան լրիկայում ոջ վերջավորությամբ միայն մի վկայություն գտանք՝ Իւրաքանչիւր յիւրում տեղւոջ ուր պատահեցան՝ անկանէին (ՆՇ, 258):

Միջին հայերենից սկսած ոջ հոլովիչը սկսեց տարածվել անձ և ազգակցական կապեր նշանակող անունների վրա, իսկ այս բառերը ներգոյական հոլով չունեին կամ ներգոյական հոլովը կազմում էին նկարագրական եղանակով (սեռական + մեջ): Եվ հակառակը, այն անունները, որոնք եզակի ներգոյականում ստանում էին ոջ, մեծ մասամբ տեղ և ժամանակ էին նշանակում և ունեին հիմքի ի վերջնահնչյունը (կղզի, տեղի, այգի) և որ կարևորն է, ե-

¹⁷ Ֆրիկ, Տաղեր, Երևան, 1982: Հովհ. Երզնկացի, Տաղեր, մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, Երևան, 1971: Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1982: Հովհ. Թվկուրանցի, Տաղեր, Երևան, 1960: Սկրտիչ Նաղաշ, Տաղեր, մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, 1971: Ն. Քուչակ, Հարյուր ու մեկ հայերեն, Երևան, 1976: Գր. Աղթամարցի, Տաղեր, Երևան, 1984: Հովասափ Սեբաստացի, Տաղեր, մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, Երևան, 1971:

¹⁸ Լ. Յովսեփյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, էջ 40:

¹⁹ Նույն տեղում, էջ 40:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 41:

գակի սեռ.- տրականում **ոչ** վերջավորությամբ չէին հանդես գալիս, այլ ուրիշ հոլովիչներով: Այս երկու ձևության համանմանության պատճառով **ոչ**-ով ներգոյականը տարածում չգրտավ և դուրս մղվեց հոլովական համակարգից:

Ում-ով ներգոյականի առկայությունը նույնպես պատահական չէ: Դասական լեզվում, ինչպես նշել ենք, սովորական գործածություն ունեին թվականների, դերբայների, որոշ դեբանունների **ում**-ով ներգոյականները:

Դեռևս հունաբան հեղինակների և Դիոնիսիոս Թրակացու մեկնիչների գործերում համդիպում էին ինչպես գոյականների, այնպես էլ այլևայլ բառերի **ում**-ով ներգոյականներ²¹.

Ի հայումս (Աղոց, Ամանուն Մեկնիչ, 132), ի հայումս (նտ., Դավիթ Մեկնիչ, 115), ի հայումս (նտ., Ամանուն Մեկնիչ, 166), ի գրումս (նտ., 165), ի ներկայումս (նտ., 146): Ում-ով ձևեր բավականին շատ կան նաև Դավիթ Ամհադթի «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի» աշխատության մեջ. ի միջում (39), յաւազանում (նտ.), յեղանակում (44), աւրինակում (46), ի տեսականումս, ի գործնականումս (54-56): Նմանատիպ օրինակներ կան նաև նույն հեղինակի «Սահմանք»-ում: 11-13-րդ դարի հուշարձանները նոր փաստեր են վկայակոչում: Ի... եկեղեցունս (ԴՅԿ, 3, 146, 1043-1044 թթ.), ի տարումն (Յաղպատ, 180, ԺԴԴ), ի ... շաբաթում, ի տարումն (ԴՅԿ, 3, 211, 1221)²²: Ում-ով կազմությունների վերաբերյալ բավականաչափ փաստեր է բերում նաև Լ. Յովսեփյանը²³.

Ի հինգերորդում, յերկրորդում, ի տասներորդում, յապառում, ի լաբարանում, ի հանդերձելումն, ի տարումն և այլն:

Նշված ներգոյականները նույնպես կառուցված են գրաբարյան կաղապարով՝ ի + տրական(ում), որը, ինչպես տեսանք, բավականաչափ կա տարբեր ժանրերի ստեղծագործությունների մեջ, սակայն միջնադարյան չափածո գրականության մեջ ներգոյականի այդ կառույցը չի գործածվել, էլ չենք խոսում հոլովական հատուկ **ում** թեքությու ունեցող ներգոյականի մասին, որը միջնադարյան գրական հուշարձաններում սահմանափակ կիրառություն է ունեցել և տիրապետող է հանդիսացել վաղ աշխարհաբարով գրված գործերում, որոնցից մենք կփիշատակենք Ջաքարիա Ազուլեցու, Ստեփանոս Դաշտեցու և Նաղաշ Յովնաթանի երգերը:

Վաղ աշխարհաբարը (17-րդ դար) լեզվական նոր որակ էր, որն ընդհանուր հայության համար ծանայում էր որպես խոսակցական լեզու և ներկայացնում էր հիմնականում արևելյան աշխարհաբարին բնորոշ քերականական հատկանիշներ: Այս լեզվի մասին որոշակի պատկերացում է տալիս Ջաքարիա Ազուլեցու «Օրագրությունը»²⁴: Այստեղ մեզ հետաքրքրող ներգոյականը թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում հանդես է գալիս հատուկ վերջավորությամբ՝ **ում** թեքությով, ինչպես նաև **սեռականի** և **մեջ** կապի հարադրությամբ: Սրանց կողքին Ազուլեցին գործածել է նաև գրաբարյան ի + տրական կաղապարը: Ներգոյականի կազմության նոր օրինաչափությունը հանդես է գալիս նաև Ս. Դաշտեցու ստեղծագործություններում²⁵:

Մեզ առավել հետաքրքրում են 17-րդ դարի վերջի մեծ տաղերգուի՝ Նաղաշ Յովնաթանի տաղերի լեզվական քերականական հատկանիշները²⁶, մասնավորապես ներգոյականի իմաստի դրսևորման միջոցները:

Նաղաշ Յովնաթանի լեզուն գրաբարի, միջին հայերենի, բարբառի հետաքրքիր միասնություն է. դրան ավելացնենք, որ նրա մայրենի բարբառը Արարատյան բարբառի Շոռոփի խոսվածքն է, այդ իսկ պատճառով էլ նրա ստեղծագործություններում գերազանցապես տիրապետող **ում**-ով ներգոյականն է՝ առանց ի մախդրի հարադրության. **ում**-ը հանդես է գալիս իբրև ներգոյականի հոլովանիշ վերջավորություն թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում, որը հաճախ զուգակցվում է հողերով, որը և ժողովրդա-խոսակցական լեզվին բնորոշ իրողություն է. օրինակներ՝ մատունդ (16), ծոցունդ (47), սրտունս (52, 98), պաղչունս (59), մեջլիսունս (78), սրտունս (93), գլխունս (105), քուչունս (107), փողամանունս (109), բերանունս (148), այգունս (152), սրտունդ (165) և այլն: Լինելով նոր կազմավորվող լեզվի նմուշ՝ բնականաբար նրա-

²¹ Տե՛ս Է. Մկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Երևան, 1980, էջ 127-140:

²² Տե՛ս նույն տեղը:

²³ Տե՛ս նույն տեղը, Լ. Ջովսեփյան, նշվ. աշխ., էջ 41-42:

²⁴ Տե՛ս Ռ. Դազարչյան, Արևելահայ վաղ աշխարհաբարը ըստ Ջաքարիա Ազուլեցու «Օրագրության», «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, N 2, էջ 18:

²⁵ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության պատմություն, Երևան, 1978:

²⁶ Տե՛ս Նաղաշ Ջովնաթան, Տաղեր, Երևան, 1983:

նում գործածվել են նաև ներգոյականի՝ գրաբարին և միջին հայերենին բնորոշ կազմություններ. յարգանդի (170), ի Յորդանան (209), ի մեջլիսին (181), ի թարվեզ (199):

Ի նախդրի անկման հետևանքով առաջացավ աննախդրի ներգոյական ուղղականի ձևով և աննախդրի ներգոյական տրականի ձևով, սակայն այս փաստերը սակավ են, որակ չեն կազմում. օրինակներ՝ **ծոցը** կա երկու քաղաք զառնշան (50), Մեկ գիշեր ինձ տար **ծոցը** պահէ (35), Նստենք **Մեջլիս** (30), Նորահաս սպիտակ շամամներ կայ քո ծոցին (27):

Ում ձևին զուգընթաց հանդես է գալիս սեռականը **մեջ** կապի հարադրությամբ: Գրաբարում որոշ նախադրություններ՝ **վրա, մեջ, ներքո**, հանդես էին գալիս ի նախդրով. փաստորեն այս նախադրությունները գրաբարում պահպանում էին իրենց գոյականական իմաստը: Ի **մեջ + գոյական** կառույցը շարունակում էր իր կենսունակությունը նաև միջին հայերենով զրկված հուշարձաններում՝ սկսած Ներսես Շնորհալուց մինչև Նաղաշ Դովնաթան: Ահա բնորոշ մի շարք փաստեր. Չինչ արեւու շողմ ի ջրին **ի մեջ** հոգոյս կու թըռուրնայ (Ֆր., 33): Ինքն անկանի ի մեջ գրին (Ֆր., 73): Մոմ են **ի մեջ** հրոյն վառեալ (Կե, 72): Լողան ձկուճք **ի մեջ** ծովուն (Կե, 144): Փայլուն մարգարիտ **ի մեջ** սադաֆին (ԳԱ, 80): Դու կարմիր խնձոր **ի մեջ** տերևին (ԳԱ, 106): Դամասփիւն **ի մեջ** ծաղկաց երևի յօր Դամբարձման (ԴԹ, 166): Գորգ մեռավ **ի մեջ** գիշերին (ԳԱ, 206): Լույս դպեր **ի մեջ** ծծերուն (ՆԶ, 81): Ծփան քան զնա **ի մեջ** ծովան (ՅԱ, 208):

Ղետագայում՝ 16-րդ դարից սկսած, հանդիպում ենք **ի մեջ** նախադրության այլ տարբերակների, այն է՝ Ծփաց **մեջ** ջրերուն (ՅԱ, 222): Տուն են շիներ **մեջ** այգուս (Նտ., 95): Սրտիս **մեջն** ի լուռ եկար (ՆԶ, 22):

Նշված օրինակներից առաջին երկուսում **ի մեջ** կառույցից միայն **ի** նախդիրն է ընկել, իսկ երկրորդում փոխվել է նաև շարահատությունը և դարձել ետադրություն:

Ղետագայում այս գործընթացը հանընդհանուր բնույթ է կրում. նախդիրները դուրս են ընկնում, նախադրությունները՝ կորցնում են իրենց գոյականական իմաստը, նրանց շարահատությունը փոխվում է, և սովորական է դառնում ետադաս գործածությունը:

Արդեն 17-րդ դարում Ջ. Ազուլեցու «Օրագրություն»-ում, Ս. Դաշտեցու, Ն. Դովնաթանի տաղերում կողք-կողքի գործածվում էր ներգոյականը՝ ում թեքությով, և հոլովի իմաստի արտահայտման շարահյուսական միջոցով՝ **սեռականի և մեջ** կապի հարադրությամբ, իսկ վերջինս էլ հոդի զուգակցությամբ:

Բերենք փաստեր Ն. Դովնաթանի տաղերից. ինչպես՝ խնձորի մեջն (17), բախչի մեջն (42), կրակի մեջն (66), թասի մեջն (83):

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին արդեն երկփեղկվում էր ընդհանուր աշխարհաբարը: Դրա վկայությունն են 18-րդ դարի հոլանդացի հայագետ Յոհան Շրյոդերի «Գանձ արամեան լեզուի» (Ամստերդամ, 1711) և Ս. Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» (Կեմետիկ, 1727) աշխատությունները: Առաջինը լատիներեն լեզվով ներկայացնում է վաղ աշխարհաբարը («քաղաքացիական հայերենը»): Արարատյան բարբառի լեզվական-քերականական առանձնահատկությունները մկատի ունենալով, իսկ հայատառ թուրքերենով գրված երկրորդ ուսումնասիրության մեջ ներկայացված աշխարհաբարն ունի կը ճյուղի հատկանիշները: Սա վկայում է, որ դեռևս 18-րդ դարում զծագրվում էին աշխարհաբարի ում և կը տարբերակները: Այս դարից էլ սկսում է ում թեքությով ներգոյականը տարածվել ում ճյուղի բարբառներում, այնուհետև արևելահայ գրական լեզվում, իսկ նույն հոլովի իմաստի արտահայտման միայն շարահյուսական եղանակը՝ սեռական + մեջ, սկսեց գործածվել կը ճյուղի բարբառներում, ապա՝ արևմտահայ գրական լեզվում:

А. О. ШАХБАЗЯН - Местный падеж в армянском языке. - В статье представляются грамматические средства выражения значения местного падежа в армянской средневековой литературе. Привлеченные фактические материалы свидетельствуют о том, что габаровская модель выражения местного падежа с некоторыми изменениями сохранилась до позднего средневековья в сочинениях последних поэтов, пишущих на среднеармянском (16 в.) и особенно в языке письменных памятников раннего ашхарабара (17 в.) (Степанос Даштеци, Нагаш Овнатан). Господствующими становятся форма местного падежа с флексией ում, а также синтаксическая структура родительный плюс предлог մեջ. С 18-го века раздваивается общий ашхарабар и вырисовываются два варианта на ում и կը. Местный на ում распространяется в диалекте ветви на ում, а затем в восточно-армянском литературном языке, а вариант կը - в западноармянском литературном языке.